

Բանալի բառեր՝ վարկ, առևտրային բանկ, վարկային կազմակերպություն, ֆինանսական շուկա:

ՀՏԴ 336

ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՅ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Բնակչության վարկավորման
տեսամեթոդաբանական հիմքերը և նշանակությունը

Մելանյա ՋԱԿՈԲՅԱՆ

Գիտական դեկավար՝
Աննա ԱՍԼԱՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տնտեսական կյանքում վարկային հարաբերություններն իրականացվում են բանկային համակարգի, վարկային կազմակերպությունների միջոցով: Բանկերը այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը:

Վարկային կազմակերպություններին օրենքով թույլատրվում է իրականացնել գրեթե բոլոր բանկային գործառնությունները: Բանկերն առաջացել են բավականին վաղ ժամանակներից, սակայն վարկային կազմակերպությունները չեն զիջում բանկերին և բավականին մեծ նշանակություն ունեն երկրի տնտեսության զարգացման մեջ: Վարկային կազմակերպություններն ինչպես առևտրային բանկերը իրականացնում են հետևյալ ֆինանսական գործառնությունները՝ ներգրավում են փոխառություններ, տրամադրում են վարկեր, փոխատվություններ, տրամադրում են երաշխիքներ, թողարկում, գնում և վաճառում են արժեթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր, մատուցում են ֆինանսական գործակալի ծառայություններ, գնում և վաճառում են արտարժույթ, թանկարժեք մետաղների բանկային ծուլակտորներ, իրականացնում են ֆինանսական վարձակալություն, ի պահ են ընդունում թանկարժեք մետաղներ, քարտեր, ոսկերչական իրեր, մատուցում են ֆինանսական խորհրդատվություն և այլն¹: Վարկային կազմակերպությունների և առևտրային բանկերի հիմնական տարբերությունը այն է, որ վարկային կազմակերպությունները իրենց միջոցների հաշվին են վարկեր տրամադրում, այսինքն՝ ավանդներ չեն ներգրավում: Եվ բանկերն ի տարբերություն վարկային կազմակերպությունների կարող են բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ:

Վարկային կազմակերպությունը վարկառուին կարող է սպառողական վարկ տրամադրել, եթե վարկառուն համապատասխանում է վարկային կազմակերպության ներքին ակտերով սահմանված վարկունակության չափանիշներին²:

Վերջին տարիներին ակտիվորեն զարանում է բնակչության վարկավորումը առևտրային կազմակերպությունների միջնորդությամբ: Գնորդները տարածամկետ վճարմամբ գնում են թանկարժեք ապրանքներ (ավտոմեքենաներ, սառնարաններ, վազքի մեքենաներ, համակարգիչներ և երկարաժամկետ օգտագործման այլ ապրանքներ):

Ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների համար վարկունակության չափանիշներ են՝

- ✓ սպառողական վարկի մարման համար վարկառուի բավարար եկամտի աղբյուրը,
- ✓ վարկառուի իրացվելիությունը, բավարար դրամական միջոցները,
- ✓ համապատասխան գրավի առկայությունը,
- ✓ վարկառուի գործունակությունը:

Սպառողական վարկերի տրամադրման պայմանները բավականին տարբեր են ԶԳ առևտրային բանկերում և վարկային կազմակերպություններում: Հիմնական տարբերությունները կայանում են պահանջվող փաստաթղթերի, վարկի տոկոսադրույքի հաշվարկման ձևի, վարկի մարման ձևի, վարկային հայտի քննման ժամկետների, գրավի պահանջի առկայության և այլնի մեջ: Վարկի տոկոսադրույքի հաշվարկը կարող է իրականացվել մայր գումարի կամ նվազող մնացորդի նկատմամբ, վարկը կարող է մարվել վարկի տևողության ընթացքում կամ ժամկետի վերջում³:

Բանկերը և վարկային կազմակերպություններն ունեն վարկառուների գնահատման տարբեր համակարգեր: ՀՀ-ում վարկային կազմակերպությունների պահանջը ավելի մեղմ է, քան առևտրային բանկերինը: Բանկերն ի տարբերություն վարկային կազմակերպությունների ավելի հաճախ են խուսափում ռիսկային վարկեր տրամադրել և հիմնականում պահանջում են եկամուտը հավաստող փաստաթուղթ: Օրինակ Գլոբալ Կրեդիտ վարկային կազմակերպությունը տրամադրում է սպառողական վարկեր առանց եկամուտը հավաստող փաստաթղթի: Անելիք բանկը նույնպես ունի սպառողական վարկի տեսակ առանց եկամուտը հավաստող փաստաթղթի, սակայն այս դեպքում պարտադիր է գույքի գրավադրումը⁴: Տարբեր է նաև տրամադրվող սպառողական վարկերի տևողությունը: Շատ հաճախ սպառողները նախըմտրում են վարկեր վերցնել այն կազմակերպություններից, որոնք ավելի երկար ժամկետով են վարկեր տրամադրում: Սակայն այստեղ նրանք հաշվի չեն

¹ Վարկային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք

² ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումը «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգը» հաստատելու մասին

³ www.abcfinance.am

⁴ www.anelikbank.am

առնում, որ որքան երկար է տրամադրվող վարկի ժամկետը, այնքան ավելի շատ են տոկոսներ վճարում: Ամսական վճարները լինում են ավելի ցածր, սակայն ընդհանուր ծախսը ավելանում է:

2017 թվականին նկատվում է վարկերի տրամադրման տոկոսադրույքի զգալի փոփոխություն: 2017 թվականին 2016 թվականի նկատմամբ զգալի իջել են վարկերի տրամադրման տոկոսադրույքները: Այդ իսկ պատճառով 2017 թվականին յուրաքանչյուր ամիս նկատվում է առևտրային բանկերի կողմից տրված վարկերի աճ: Այժմ ներկայացնենք աղյուսակի տեսքով⁵ (տես՝ Աղյուսակ 1.):


**Աղյուսակ 1.
ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկեր, մլն. ՀՀ դրամ**

	ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկեր 2016թ.	ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկեր 2017թ.
Հունվար	1 995 088	2 114 619
Փետրվար	2 040 403	2 127 005
Մարտ	2 038 057	2 147 438
Ապրիլ	2 047 693	2 179 624
Մայիս	2 043 900	2 188 818
Հունիս	2 060 215	2 226 811
Հուլիս	2 057 255	2 245 444
Օգոստոս	2 055 591	2 268 172
Սեպտեմբեր	2 053 861	2 313 524
Հոկտեմբեր	2 047 149	2 321 223
Նոյեմբեր	2 082 321	2 369 755

Նկատենք, որ հունվար ամսին վարկերը աճել են 6%-ով: Փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսներին նկատվում է մինչև 7% աճ: Յուրաքանչյուր ամիս վարկերի թիվն աճել է: Նոյեմբեր ամսին վարկերի աճը հասել է մինչև 14%:

Կարևոր է նշել նաև այն, որ ռեզիդենտներին տրամադրված վարկերում գերակշիռ մաս են կազմում սպառողական վարկերը: Ներկայացնենք գծապատկերի տեսքով 2017 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ:

Ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների⁶



Հայաստանի Հանրապետությունում, չնայած բարձր տոկոսադրույքներին և խիստ պայմաններին, Հայաստանի ֆինանսական համակարգում սպառողական վարկերի պահանջարկը վերջին տարիներին արագորեն ավելանում է: Բացի այդ նշենք, որ դրանց բաժինն ամենամեծն է բանկերի վարկային պորտֆելում: Սպառողական վարկերի աճը խթանում է ոչ միայն վարկային շուկայի զարգացումը ՀՀ-ում, այլ նաև ակտիվացնում է շրջանառությունը և մեծացնում բնակչության սպառման ծավալները: Ինչպես առևտրային բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող սպառողական վարկերի նկատմամբ սահմանվող տոկոսադրույքներն ուղղակիորեն կախված են վարկային ռիսկից: Բնականաբար, որքան մեծ լինի այդ ռիսկը, այնքան բարձր կլինի նաև տոկոսադրույքը: Սակայն, եթե տոկոսադրույքը շատ

⁵ cba.am

⁶ cba.am

բարձրանա, բանկը կամ վարկային կազմակերպությունը կկորցնի իր հիմնական հաճախորդներին: Բացի այդ, որքան մեծ լինի տոկոսադրույթը, այնքան մեծ կլինի վարկառուի վճարելիք գումարի մեծությունը, ինչն էլ մեծացնում է վարկի չվերադարձման հավանականությունը: Այսօր ՀՀ բանկային համակարգում առկա են մի շարք ռիսկեր, որոնք կարող են դրսևորվել ֆինանսական անկայունության պայմաններում:

Հաճախորդները առանց հաշվի առնելու միջնորդավճարները, ժամկետնանց տոկոսագումարի գծով տույժերը և այլ ծախսեր, նախընտրությունը տալիս են այն կազմակերպությանը, որը ավելի ցածր տոկոսադրույթով վարկ է առաջարկում:

Դիտարկենք Գլոբալ Կրեդիտ և Ֆասթ Կրեդիտ վարկային կազմակերպությունները:

Աղյուսակ 2.

Վարկերի տրամադրման պայմանները Գլոբալ Կրեդիտ և Ֆասթ Կրեդիտ վարկային կազմակերպություններում

Վարկային կազմակերպության անվանումը	Տարեկան տոկոսադրույթ	Սպասարկման վճարներ	Կանխիկացում
Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ	24%	Մինչև 150.000 ՀՀ դրամի դեպքում՝ 2000 ՀՀ դրամ, 150.000-250.000 ՀՀ դրամի դեպքում՝ 4000 ՀՀ դրամ և այլն	0,3%
Ֆասթ Կրեդիտ ՈՒՎԿ	24%	Չունի	Չունի

Առաջին հայացքից երկու վարկային կազմակերպություններն էլ տրամադրում են 24%-ով ոսկու գրավադրմամբ վարկեր: Սակայն, սա ընդամենը տարեկան տոկոսադրույթն է: Հաշվի առնելով սպասարկման վճարները, կանխիկացման տոկոսները, տույժերի տուգանքների ժամանակ հաշվարկվող տոկոսներ, կարող ենք ասել, որ Ֆասթ Կրեդիտ վարկային կազմակերպության փաստացի տոկոսադրույթը ավելի ցածր է: Սա այն խնդիրն է, որին հաճախորդները ամենաքիչն են անդրադառնում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ սպառողական վարկերի շուկայում գոյություն ունեն մի շարք ստանդարտ չափանիշներ: Սակայն վարկերի տրամադրման պայմաններն ամբողջովին տարբեր են ֆինանսական շուկայում:

Ներկայացվել է 12.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.